«ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Եկեղեցի և կրթություն» թեմայով երկրորդ քննարկումը՝ կազմակերպված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի կողմից, որին մասնակցում էին եկեղեցականներ, պետական մարմինների, կրթական և հասարակական հաստատությունների ներկայացուցիչներ:

Քննարկումը սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո Մայր Աթոռի Միջեկեղեցական գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանն անդրադարձավ նախորդ հանդիպման արդյունքներին և ներկայացված օրակարգին: Այնուհետև «Քրիստոնեական դաստիարակության հիմնախնդիրները կրթական համակարգում» թեմայով զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը և ներկայացրեց ՔԴԿ ներկայիս գործունեությունը: Հայր Սուրբն անդրադարձավ նախադպրոցական և դպրոցական համակարգերում քրիստոնեական արժեքների տարածման անհրաժեշտությանը՝ շեշտելով հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման հետ կապված ձեռքբերումներն ու առկա խնդիրները: Հայր Վարդանը նշեց, որ այս հարցում շատ կարևոր է եկեղեցի-կրթական համակարգ փոխհամագործակցությունը, որում մեծ դերակատարություն ունեն եկեղեցականները, դպրոցի տնօրենները և ամենակարևորը՝ Հայ Եկեղեցու պատմություն առարկան դասավանդող ուսուցիչները, որոնց ուսերին մեծ պատասխանատվություն է դրված: Հայր Սուրբի զեկույցից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Ներկաները խոսեցին իրենց անձնական փորձառության և դիտարկումների մասին, կատարեցին նաև առաջարկներ:

Քննարկման ընթացքում ներկաների ուշադրությանը հանձնվեց երիտասարդ իրավաբաններ Վահե Ենգիբարյանի և Արթուր Չախոյանի հեղինակած «Դավանանքի իրավունք» գիրքը, որը մատչելի կերպով անդրադառնում է եկեղեցի-պետություն հարաբերություններին, ընդունված սահմանադրական նորմերին, ՀՀ և միջազգային համապատասխան օրենսդրական ակտերին, էկումենիկ միջազգային կազմակերպություններին, Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը էկումենիկ շարժմանն ու այլ հետաքրքրական խնդիրների: Ներկաներն ուրախությամբ արձանագրեցին, որ գիրքն իրապես օգտակար կարող է լինել հատկապես երիտասարդների համար՝ հարստացնելով նրանց կրոնական և իրավական գիտելիքները:

Վերջում ԵՀԽ Կլոր Սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը շնորհակալություն հայտնեց կառուցողական քննարկման համար և հույս հայտնեց, որ արված առաջարկները կներկայացվեն համապատասխան կառույցների ուշադրությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ